Արձանագրություն 2

«ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Աբովյանի համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների կարիքների համար սննդամթերք ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան **05.04.2022 թ.**
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի՝
Նախագահ՝ Լ. Իսահակյան
Անդամներ՝ Ջ. Սարգսյան, Մ. Բաղդասարյան, Ա. Գրիգորյան, Լ. Հակոբյան
Քարտուղար՝ Ա. Ծատուրյան

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/11» ծածկագրով գնման ընթացակարգի մասին համառոտ տեղեկատվություն.

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Լ. Իսահակյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների e-AUCTION(https://eauction.armeps.am/ կայքի) համակարգի միջոցով: Հակադարձ աճուրդի նիստը տեղի է ունեցել 05.04.2022 թվականին ժամը 11:00-ին, Աբովյանի համայնքապետարան, ք. Աբովյան Բարեկամության հր. 1 հասցեում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել,այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ – 0:

2. Գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Լ. Իսահակյան)

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների հասցեները	Մասնակիցների հեռախոսահամարները

1	«Հայկազունք» ՍՊԸ	ք.Երևան,Նորաշեն 18-41	+374 09 94 77
2	«Սավա» ՍՊԸ	ՀՀ,Կոտայքի մարզ,ք.Աբովյան,Հանրակացարանային թաղ.8	+374 33 77 07 07
3	«Ֆոտոն» ՍՊԸ	ԼՂՀ,ք.Ստեփանակերտ,Վ.Սարգսյանի փ.,շենք14.բն.21	+374 77 55 60 77

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ – 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Մ. Մելիքսեթյան)

3.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Չափա	Չբաժնե	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	«Հայկազունք» ՍՊԸ	5030640,00	4882680,00	976536,00	5859216,00	Մերժված
2	1	«Ֆոտոն» ՍՊԸ	554850,00	640851,00	128170,20	769021,20	Մերժված
3	1	«Հայկազունք» ՍՊԸ	3528846,00	3295809,00	659161,80	3954970,80	Մերժված
4	1	«Հայկազունք» ՍՊԸ	293040,00	439560,00	87912,00	527472,00	Մերժված
5	1	«Հայկազունք» ՍՊԸ	710240,00	906295,00	181259,00	1087554,00	Մերժված
6	1	«Սավա» ՍՊԸ	3329100,00	2762000,00	552400,00	3314400,00	
6	2	«Հայկազունք» ՍՊԸ	3329100,00	2796092,00	559218,40	3355310,40	Մերժված
7	1	«Ֆոտոն» ՍՊԸ	666000,00	274725,00	54945,00	329670,00	
8	1	«Ֆոտոն» ՍՊԸ	369900,00	356028,00	71205,60	427233,60	Մերժված

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ, բացառությամբ N 1,2,3,4,5 և 8 չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկների, որոնք գերազանցում են նախահաշվային գները:

3.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ N 1,2,3,4,5 և 8 չափաբաժիններով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ – 0:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Լ. Իսահակյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

4.2 «ՍԱՎԱ» ՍՊԸ-ի համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Այսուհետև՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի թ պարբերության,մասնակիցը հայտով ներկայացնում է գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ հավելված 1.2: «Սավա» ՍՊԸ կողմից ներկայացված իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերում 4.5 կետերի ա ենթակետերում կատարված չեն համապատասխան նշումները:
4.3 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝«ՍԱՎԱ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում մեկ աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 07.04.2022թ./ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով:
Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Լ. Իսահակյան
Անդամներ՝		Ջ. Սարգսյան
		Մ. Բաղդասարյան
		Ա. Գրիգորյան
		Լ. Հակոբյան
Համակարգող		Ա. Ծատուրյան